Հավելված

Հաստատում եմ՝ _____ Գ. Գրիգորյան

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական

կենտրոն» հիմնադրամի տնօրեն

«01» _____ 2023թ.

«ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն քաղաքականությունը սահմանում է «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների (այսուհետ՝ դասավանդողներ) առաջընթացի ապահովման կարգը:

Դասավանդողների առաջընթացը Հիմնադրամի իրականացրած կրթական գործունեության որակի ապահովման կարևոր նախապայմաններից է: Դասավանդողների առաջընթացի ապահովման նպատակն է զարգացնել և կատարելագործել դասավանդողների հմտություններն ու կարողությունները:

Դասավանդողների առաջընթացի ապահովման քաղաքականությունը տարածվում է Հիմնադրամի ողջ դասավանդող անձնակազմի վրա՝ պահպանելով հավասարության և արդարության սկզբունքը:

Դասավանդողների առաջընթացի ապահովման գործընթացի իրականացման փուլերն են՝

- մասնագիտական առաջընթացի պահանջարկի ուսումնասիրություն,
- մասնագիտական առաջընթացի ապահովմանն ուղղված գործողությունների պլանի մշակում,
- իրականացման ժամկետների սահմանում,
- գործընթացի կազմակերպում և իրականացում,
- հետադարձ կապի ապահովում,
- ձեռք բերած հմտությունների կիրառում:

Դասավանդողների մասնագիտական առաջընթացի պահանջարկը կարող է ուսումնասիրվել ինչպես դասավանդողի՝ աշխատանքի ընդունելու պահին, այնպես էլ աշխատելու ընթացքում՝ ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից կամ կարիքների վերհանման հարցումների վերլուծության արդյունքում:

Գործողությունների պլանի մշակումն իրականացվում է Հիմնադրամի տնօրենի կամ տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի կողմից՝ հաշվի առնելով դասավանդողի կարիքը, առաջընթացի ապահովման գործընթացի նպատակը, ակնկալիքները և այլն:

Գործողությունների պլանի մշակումից հետո կատարվում է իրականացման ժամկետների սահմանումը:

Դասավանդողների առաջընթացի ապահովման գործընթացի կազմակերպումն ու իրականացումը կարող է կատարվել ինչպես Հիմնադրամի շրջանակներում, այնպես էլ այլ կազմակերպություններում: Գործընթացը կարող է իրականացվել ինչպես առկա, այնպես էլ հեռավար եղանակով : Գործընթացի իրականացումն իրենից կարող է ենթադրել.

- մասնակցություն սեմինարներին և կոնֆերանսներին,
- մասնակցություն հատուկ մասնագիտական վերապատրաստումներին,
- մասնակցություն մանկավարժական հմտությունների տիրապետման վերապատրաստումներին,
- մասնակցություն օտար լեզուների դասընթացներին,
- մասնակցություն համակարգչային հմտությունների ձեռքբերման դասընթացներին,
- մասնակցություն արտասահմանյան գործընկերների հետ փորձի փոխանակման ծրագրերին,
- մասնակցություն արտասահմանյան գործընկերների կողմից իրականացվող վարպետաց դասերին,
- մենթորական աշխատանքների իրականացում սկսնակ դասավանդողների համար,
- ֆոկուս-խմբային հանդիպումներ փորձառու դասավանդողների հետ:

Դասավանդողների մասնագիտական առաջընթացի կազմակերպման և իրականացման համար պատասխանատու մարմիններն են՝ Հիմնադրամի տնօրենը, տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալը, կրթության որակի ապահովման պատասխանատուն, Հիմնադրամում գործող մասնագիտությունների գծով պատասխանատուները:

Մասնագիտական առաջընթացին ուղղված գործողությունների ավարտին դասավանդողը իր գործընկերների հետ կիսվում է իր ձեռք բերած գիտելիքներով ու կարողություններով:

Փաստաթուղթն ուժի մեջ է մտնում հաստատման պահից: